ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>>ՓԲԸ-ն, որը գտնվում է ք. Գյումրի Գ. Նժդեհի 5 հասցեում, ստորև ներկայացնում է <<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>> ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի արդյունքում 2013թ-ի փետրվարի 12-ին <<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում 2013թ-ի դեկտեմբերի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Պատվիրատուի մոտ առաջացել է դեղորայքի և պատվաստանյութերի լրացուցիչ քանակի ձեռքբերման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին համաձայնագիր պայմանագրի գումարի մինչև 20%-ի ավելացման վերաբերյալ:

<<ՇՄԳՄՄԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/4-1>> գնման պայմանագրի նախնական պայմանագրային արժեքը կազմում է 11 633 056 ՀՀ դրամ, իսկ համաձայնագրով լրացուցիչ գնում կատարելուց հետո՝ 12 019 011.1 ՀՀ դրամ

Փոփոխության հիմնավորում: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի բ) ենթակետի համաձայն համաձայնագրի գինը չի գերազանցում սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Լրացուցիչ գնումը կատարվում է առաջին անգամ

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Նվարդ Բադալյանին:

Հեռախոս՝ 055 71 51 00:

Էլ. փոստ՝ nvardbadalyan@gmail.com:

Պատվիրատու՝ ***<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ:***